

տահել այլ և այլ երկրներում: որոնց մասին վկայել կարող են խիռուրդ վիրաբույժները և խելագարների բժիշկները:

Մեկվինա Մորֆորտի դեպքը նշանաւոր աւելի հետաքրքիր և ուշադրութեան արժանի է նրանով, որ օրիորդը հարիւր անգամից աւելի ենթարկուել է տանջող, ծանր անգամահատութեան:

Այդքան դժուար փորձերից յետոյ բժիշկները դուրս են բերել նրա մարմնից՝ մօտաւորապէս 800 ասեղներ: Աղջիկը չի խոստովանում այդ, մընում է մեզ ենթադրել, որ նա իւր մոլութեանը բաւականութիւն է տուել հոգեկան խանգարման բուժեանքին, որից յետոյ խաղաղ միջոցին աղջիկը ոչինչ յիշելիս չէ եղել: Արդէն հաստատապէս ապացուցուել է, որ ասեղները մարմնի մէջ թափառում են և անասելի ցաւեր պատճառում: Գոհաօր Բուրգոն Բենտզենի ճառագայթների շնորհիւ վերոյիշեալ աղջկայ աջ ձեռքը ընդօրինակեց և գտաւ մօտ 30 բարակ փղբրիկ գծեր, որտեղ տեւաւորուած են եղել ասեղները: Հնորհիւ այս վերջին փորձի, յաջողուեց գուրս հանել նորից 9 ասեղ, բայց արդէն պէտք է ստանձին ուշք դարձնել դադարեցնելու անգամահատութիւնն: որովհետեւ կը յառաջանայ արեան սաստիկ կորուստ, ապա և ցաւալի հետեւանքներ: Ենթադրում են, որ ապագայում դարձեալ ստիպուած պէտք է լինին կրկնել այդ չարտառնջ անգամահատութիւնը: Գրեթե աղջիկ այժմ ապրում է իւր մօր մօտ, որն և անբուն աչքով և մեծ խնամքով հսկում է իւր տարաբաղդ և թշուառ աղջկանը: Գժուար է երեւակայել, թէ արդեօք ինչպէս և որտեղից է նա ձեռք բերում իւր կեանքը թորնաւորող այդ ասեղները:

*
* *

Թղթից պատճառած սնկեր. — Ամերիկացիների հետաքրիտութեանը չափ և սահման չկայ. նոքա այժմ թղթէ տներ են շինում: Հիւսիսային Ամերիկայի Միացեալ նահանգներից մէկում — Վիսկոնսինում գոյութիւն ունի մի ահագին գործարան, որտեղ պատրաստուում է և հաստ 2—3 մետր երկայնութիւն ունեցող սալի նման այսպէս անուանուած «թղթէ աղիւսներ»: Հիմութեան համար հնարած այս նոր նիւթերը մեծ առաւելութիւններ ունին քարից, նախ և առաջ թուղթը տաքութիւն փառ հաղորդող մարմինների կարգին է պատկանում: քան աղիւսը կամ քարը ուստի և թղթից կառուցած տները ձմեռը տաք են լինում: իսկ ամառը ջրով, Հիմութեան ժամանակ թղթից պատրաստած աղիւսներին քսում են ճարպային նիւթ, որպէսզի խոնաւութիւնից ազատ լինի: Բացի դրանից այդ թղթեայ աղիւսները մի լաւ թրջում են աղաջրով և զանազան նիւթերով (антисептических веществам), որով և թուղթն ապահովուում է այրուելուց և անմատչելի է դառնում միջատների և զանազան միկրօօրների համար:

Այս բոլորից մենք կարող ենք եզրակացնել այն, որ այսպիսի նիւթերից պատրաստուած տներն ամենայնարմարն իրէպարկանն պէտք է համարել, ինչպէս առողջապահական, նոյնպէս և հրդեհներից ապահով լինելու տեսակէտից:



ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ՀԱՅԻ ՀԱՄԲԵՐԱՏԱՐ ՈԳԻՆ.

Մեր պատմական կեանքի մէջ եղել են շատ ծանր վայրկեաններ. չպիտի վարանինք ասելու, որ նոյն իսկ Հայոց դարաւոր կեանքը ծանր վայրկեանների մի անընդհատ շարք է. ո՛վ այս գիտէ, ո՛վ այս զաղափարը լրջօրէն ըմբռնել կարող է, նորահամար ակնյայտնի պէտք է լինի թէ ի՞նչ է պահանջուում մեր եկեղեցու ամէն մէկ անդամից, մեզանից պահանջուում է միշտ խոնարհել Տիրոջ ամենաբարի կամքի առաջ և միշտ գոհ լինել նորա ամենաառատ պարգևներից. այսպէս է ուսուցանում մեզ մեր պատմութիւնը. այսպէս է հրահանգում մեզ մեր դարաւոր փորձը. այսպէս է վիճակուած մեզ Նախախնամութիւնից ոչ այսօր, այլ միշտ:

Պարզեմք այս միտքը պատմական փառտերով, թողնի՛ւք հին անցեալը որ շատերի երեւակայութեան մէջ պատկերանում է իբրեւ ոսկի օրերի մի շրջան. թողնի՛ւք նաեւ Արաբացւոց արշաւանքի և տիրապետութեան ժամանակները, որ ոչ այլ ինչ էր, եթէ ոչ անգութ զործերի և յուսահատեցուցիչ ոճիրների մի անտանելի տեսարան: Մտարեւելք այն, ինչ որ մեր ժամանակներին աւելի մօտիկ է: Յիշե՛նք, օրինակ, Սեւջուքների արշաւանքի օրերն, երբ հոյակապ շէներ ու աւաններ, քաղաքներ ու բերդեր հողի մօխրի հաւասարուեցան, երբ մեծափարթամ թագաւորութիւններն և նախարարական տոհմերը շատ կարճ ժամանակի մէջ ոչընչացան, երբ մեր փառազարդ բազմամարդ վանքերն ու եկեղեցիներն անշքացան: Գիտե՛ք ինչ հարուած, ի՞նչ երկնային պատուհաս էր այդ ի՛նչ անտանելի պատմական վայրկեան էր:

այն ժամանակ ամէն զք նշովում էր «արեւի լոյսը» ամէն զք ցերեկն իրեն զիշեր էր համարում։ Այս Հայոց համար աշխարհի վախճանն հասած էր երեւում։] մինչև անգամ նոյն իսկ կրօնաւորների բերանով ժողովրդի մէջ այն կարծիքն էր տարածուում, թէ աշխարհի վերջն եկել է, սատանան իւր հազարամեայ կապանքից արձակուել է, և համատարած մահն ու ապականութիւնն անխուսափելի է։ Անցաւ այդ ժամանակն, այդ կսկծալի, աղէտալի ժԱ. դարը, չէք կարծում, որ եթէ այսօր այն ժամանակի մարդիկ զլուիններն հանելու լինէին զերեզմանից, պիտի զարմանային, որ դեռ հայի անուն կայ, հայի ժամ կայ, հայի դպրոց ու դպրութիւն կայ, այդ նոքա պիտի չհաւատային, զի նոյն իսկ իրենց զերեզմանի մէջ իրենց հետ միասին թաղուած են համարում բոլոր հայերին, սակայն այսօր մենք չպիտի զլանանք նոցա ասելու «միթարութեցէք, միթիթարութեցէք, Ամենակարողի աջը դեռ մեզ պահում է աշխարհիս երեսին»։

Թողնինք այդ, և աւելի յառաջ անցնինք։ Մեզ համար այդ ծանր ժամանակն իւր աղէտներով ի՛նչ է այն սարսափների, այն ահաբեկի ոճիրների, այն կորստաբեր հարուածների առաջ, որոնք Հայոց զխնին հասան Թաւրիների արշաւանքների ժամանակ, ողջ երկիրն արեան և արտասուքի մէջ լողում էր, անկիւն չմնաց շէն, տեղ չմնաց, որ կրակի և ծխի մէջ բոլորքուած ու սեւացած լինէր, պատմական աննկարագրելի վայրկեան, երբ հայ մարդու կենդանութեան համար նոյն իսկ զերութիւնն ու ստրկութիւնն էլ կարծես բարեբաղդութիւն էր համարուում։ Ի՛նչ եղան այն օրերը, չկան, նոքա էլ անցան, անհետ եղան, անկարող լինելով իսպառ ոչնչացնել հայի անունն և յիշատակը, թէև անազորոյն դահիճներին աջակից եղան մինչև անգամ դաւաճանները ներսից և կրօնական պառակտողները դրսից, թէև խիղճն ու համոզմունքն անգամ իրիւս տարանք ի վաճառ հանուեցաւ քրիստոնեայ անուն կրող շահավաճառների ձեռքով։ Ժամանակի մարդիկ մեռան յուսահատութեան մէջ, բայց կենդանին յաւիտենից չմասնեց իւր ժողովուրդն ի կո-

րուստ այդ վերահաս փորձութեան դառնահսկիճ ծնշման տակ։

Կարող ենք, հապա՛ մոռանալ Լանկթէ մուրի աշխարհաւեր հարուածները, Հալիլէ Բուրդ, Պարսիկ և Թուրք բռնաւորների յարատե հալածանքները մի քանի դար շարունակ բնիկ հայ ժողովրդին սպառելու համար։ Եւ ի՛նչպէս կարող ենք այդ մոռանալ, երբ քաջ զիտենք, որ դեռ ժԴ. դարի սկզբում մեր ողբասացն Սա. Օրպէլեան Ս. ԼՃմիածնի վերայ ողբալու ժամանակ պատկերացնում է նորա կատարեալ ամայութիւնը, և յուշկապարիկների ու ոգիների օթեան է անուանում այդ բաղձագարեան սրբավայրը։¹

«Փոխան ծայնից սրբերգնին
Դեւք եւ ոգնիք քեզ կարաւին.
Փոխան բուրմանցն նարդոսի
Աղբք եւ ախշք ի քեզ կուտին.
Փոխան սրբոց պաշտօնէին
Յուշկապարիկք ի քեզ քնակին։»

Այս է եղել մեր Մայր Վանքի պատկերն այն ժամանակ։ Նոյնն է հաստատուում և Դաւրիժեցի պատմագիրն Առաքել, երբ յիշում է, որ Ս. ԼՃմիածինն այնպիսի անկման, այնպիսի անշքութեան, աւելին ասենք, այնպիսի անտիրութեան էր հասած, որ մի «այլազգի մահմէտականի» էր վիճակուել (այս էլ, երեւի, Աստուծոյ կամքն էր) ձէթ բերել երբեմն Ս. Խջման տեղն և ճրագ վառել՝ այն էլ անցորդների և ծամբորդների համար։ Սորանից աւելի էլ ի՛նչ թշուառ վիճակ պիտի լինէր հայի համար, թող պատմին ինքը խօսի. «զիրք չկար, ասում է, որովհետեւ ժամ ասել չկար, ոչ շուրջառ կար և ոչ զրհատ, որովհետեւ պատարագ չկար, խնկարկութիւն չկար, որովհետեւ ոչ խունկ կար, ոչ բուրվառ» և ին։

Ե՛լ Հալիլենք Շահարասի արշաւանքն ու բռնի դաղթականութեամբ մեր երկրի ամենալաւ մասն ապականելն ու աւերելը, երբ մինչև անգամ Հայոց աղօթաւոր ճգնաղգեաց մարդիկ, մի անդղթ անկիւն չունենալով աղօթելու, բացօթեայ տեղերում լնճների առա-

1. Տե՛ս Սո. Օրպէլեանի ողբ ի Ս. Կարապետիկն։

պարներին քարքարուտների և անբնակ հովիտների մէջ էին ապրում և կնքում իրենց մահկանացուն: Նոյն իսկ մեր Մայր եկեղեցին Ս. ԼՅմիածինը քանդուկացաւ և նորա քարերն ու հողը տարուեցան Պարսկաստան, որպէսզի այս տեղ հայի սիրտը կապող միտքը ժողովող մի այլ առարկայ չգտնուի: Ի՞նչ եղաւ այդ տխուր և անտանելի անցքից յետոյ: Գուսահատուողներն յուսահատուեցան, իսկ Աստուծոյ ողորմութեան կենդանարար արեւը դարձեալ հանեց ու կանգնեց այն կործանած ժողովրդին, որին խրատելու համար ուղարկել էր այդ պատուհասները:

Մի տարուայ մի դարի մի քանի դարերի անցեալ չէ այս ծանր աղէտների անցեալը. ամեն ինչ բազմադարեան կեանքի դրոշմով է դրոշմուած. գիտենք այդ քաջ ըմբռնում ենք այդ ամենի խորհուրդը. պատմական անցքերի պատճառարանութեան բարդ ելեւէջների մէջ այդ ծանր վայրկեաններն իսկապէս կենսունակ զօրութեան փորձաքարերն են, որոնցով կարելի է մի ազգի մի ժողովրդի ոյժերը զտել և նորա բարոյական ոսկին ճանաչել. եթէ այդ ոսկին բնատուր է և կայ, ամէն տեղ, ամէն հանգամանքի մէջ նա կըմնայ նոյն անսպական ազնիւ մետաղը, որ ամէն հրապարակի վերայ ամէն վայրկեանների մէջ իւր բարձր գինն ունի: Ծանր աղէտների մէջ այդ ոսկին հայի համբերատար ոգին է եղել, մի առաքինութիւն, որ ըստ երեւութին շատ պակաս է մեր ժամանակի ժողովրդի մէջ, բայց բարեբաղդաբար մի բնատուր յատկութիւն է, որ ցեղական ժառանգութեամբ կայ և մնում է միշտ հայի մէջ:

Ասացինք ըստ երեւութին, զի մեր համոզումը չէ թէ հայ ժողովուրդը զուրկ է համբերատար ոգուց: Իրականութիւնն այլ բան է ասում մեզ, այդ ժողովուրդն է, որ ապրել է ամէն տեսակ ցեղերի հետ, անցեալում բնակակից է եղել միշտ իւր դահիճների հետ, համբերութեամբ ծառայել է իւր հալածողներին, քրանել, վատաւել, երկիր մշակել և իւր վատաւով կերակրուել ու կե-

րակրել է իրեն հարստահարողներին հարկւրաւոր տարիներ շարունակ ոչ միայն իւր հայրենիքում, այլև իւր հայրենիքից հեռու անծանօթ երկրների իւր ժամանակաւոր գաղթավայրերում, ինչպէս օրինակ Հնդկաստանում, Եգիպտոսում, Լեհաստանում, Մոլդովալաքիայում և այլ երկրներում: Այդ համբերատար ոգւով նա պահել է իւր հաւատը և լեզուն, որովհետեւ յարգել է միշտ իւր բնակակից ցեղերի և ազգերի լեզուն և հաւատը. նոյն ոգւով պահպանել է իւր հայրենական ծէսերն ու աւանդութիւնները, որովհետեւ յարգել ու սիրել է ընտանեկան սրբութիւնը ոչ միայն իւր, այլև բնակակից ցեղերի նկատմամբ: Նոյն համբերատար ոգին ոյժ է տուել հայ քրիստոնեայ մարդուն դարեր շարունակ սիրել լուսաւորութիւնը, կանգնելով վանքեր և դպրոցներ, հաստատելով տաքաններ, բազմացնելով պէս պէս օգտակար հրատարակութիւններ, զրկաբաց ընդունելով ամէն ինչ, որ գալիս էր լուսաւորութեան և կրթութեան անունով: Այսօր հայի այդ համբերատար ոգուն ենք պարտական, որ նոյն իսկ անդադրող դարերում նուիրական հնութիւնների նշխարներն անկորուստ մընացին, որ ս. գրքերն ու սրբութիւնները պահուեցան, որ ազգն իբրեւ ազգ, թէև շատ տեղ հալածուած, առանց իւր առանձնութիւնները կորցնելու հանդիսանում է աշխարհի առաջ նոյն կենսական ուժերով: Եթէ ոմանց անհատական սխալները, կամ ընդհանուրի երբեմնական վազանցուկ կորուստները, և կամ պատահական հարուածները առժամ մի ծանր տալաւորութիւններ են թողնում, շատ անգամ նոյն իսկ անջնջելի զրոշմուում են սերունդների յիշողութեան մէջ, դորանով երբեք ազգի հիմնական յատկութիւնն իւր ոյժը չի կորցնում. նորա համբերատար ոգին մնում է միշտ իբրեւ անկորուստի մի գանձ, որ դրաւական է նորա յարատեւութեան և նոյն իսկ բարգաւաճման: Պահպանե՛ք մեր մէջ այդ անգին գանձը. իմանա՛ք նորա գինը, իմանա՛ք, թէ ի՞նչ ունինք և ի՞նչ ենք կորցնում, երբ յուսահատութեան խորհուրդներ ծփում այնկոծում են մեր միտքը: Երկայնմաութեան, համբերու-

Թեան նախագահարարը մեր երկնաւոր Հայրն է, որ զարեւ շարունակ կամեցել է մեզ պահել աշխարհիս երեսին. լինի՞նք այնպէս կատարեալ, ինչպէս կատարեալ է մեր երկնաւոր Հայրը, որ գիտէ «զպէտս մեր և զկարիս առաւել քան զոր խնդրեմք և իմանամք»:

Կ. Կ.

ՄԱՐԻ ԱԹՈՒՆ.

Վարդայ ս. Խաչի տօնին լրացաւ Վեհափառ Հայրիկի գահակալութեան չորրորդ տարին. Հայ ժողովուրդը ամեն կողմից խմբերով գլխով էր ս. Էջմիածին՝ Միածնի ս. սեղանի առաջ Վեհափառ Հայրիկի համար աղօթելու և բարօրութիւն հայցելու. նախընթաց երեկոյեան Վեհափառ Հայրապետը հանդիսաւոր թափօրով իջաւ վեհարանից, ժամասացութիւնը կատարուեցաւ տաճարի կողքին կառուցած գմբէթաղարդ բարձրաւանդակի վերայ:

Միւս առաւօտեան կիւրակի օրը վաղի բակը լցուել էր մի քանի հազար ուխտաւորներով. Պատարագի զանգերը հրաւիրեցին նոցա աղօթելու Հայաստանայց մայր եկեղեցու պայծառութեան և Հայրիկի քաջողութեան համար. եկեղեցու ներսը ասեղ ձգելու տեղ չկար, ուստի ժողովրդի մի մասը կանգնել էր զանգակատան տակը ու զոնքի առաջ, այնտեղից իւր աղօթքները ուղղելու առ Ամենակալն, որպէս զի երկար կեանք ու պայծառ օրեր շնորհէ իրենց մեծ գերդաստանին և նորա ծերունաղարդ նահապետին. Պատարագից յետոյ հայրապետական մաղթանք կատարուեցաւ, որից յետոյ միաբանները աւագութեան կարգով պատկառանքով մօտենալով Հայրապետին համբուրեցին՝ նորա ս. աջը և արժանացան նորա օրհնութեանը. Միաբանութեանը հետեւեցին ձեմարանի աշակերտները:

Այդ օրը Վեհափառ Վաթուղիկոսը բարեհաճեց իջնել սեղանատուն ու մասնակցել միաբանութեան ծաշին. ծաշի ժամանակ Գերապատիւ Տ. Սուքիաս արքեպիսկոպոսը իրեն յատուկ ճարտարութեամբ բացադրելով կրօնի և լեզուի նշանակութիւնը մի ազգի համար, առաջարկեց դոցա հովանաւորի՝ Վեհափառ Հայրիկի կենացը. Ապա նորին Սրբութիւնը առաջարկեց միաբանութեան կենացը:

Ծաշին հրաւիրուած էին ձեմարանի ուսուցիչները, Սինօգի ծառայողները, Վաղարշապատի աւագները և Երեանից եկած պատուաւոր հիւրերն իրենց թեմական փոխանորդի հետ:

Երեկոյեան այնքան ժողովուրդ էր հաւաքուել, որ վաղի լայնատարած բակը անձուկ էր երևում. Հրավառութիւնը հիանալի էր. Լուսաւորուած էին

վաղի հինգ կաթուղիկէները, Վեհարանի պատի տակը երգում էին ձեմարանի աշակերտները. Սոցա ձայնակցում էր ժողովուրդը իրենց պարերով ու լէլէներով. Աշուղները իրենց շուրջն էին խմբել իրենց լեզուն հասկացող զիւղացիներին և սովորականից գուրս ոգևորութեամբ փառաբանում էին ծերունաղարդ Հայրապետի մեծագործութիւնները:

Ս. Միւռոնի օրհնութեան և Վեհափառ Հայրապետի օծման չորրորդ տարեգարծի առթիւ ըստացուեցան բազմաթիւ հեռագիրներ Ռուսաստանի և արտասահմանի հոգևոր հայրերից, դպրոցների հոգաբարձուներից և ազգայիններից յանուն նորին Վեհափառութեանը. նորին Ս. Օծութիւնը սորանով յայտնում է իւր բարձր գոհունակութիւնը և հայրապետական օրհնութիւնը բոլորին մաղթելով երկար կեանք և բարօրութիւն:

Ս. Միւռոնի օրհնութեան հանդիսին ներկայ էին վիճակներից եկած՝ Դեր. Տ. Մեսրոպը արքեպիսկոպոսը, Տ. Ներսէս եպիսկոպոսը և Տ. Տ. Հմայեակ, Սահակ և Մխիթար վարդապետները. Իսկ քահանաներից — Բագուից՝ Խորէն աւագ քահանայ Միրզաբեգեանը և Եղիշէ քահանայ Գեղամեանը, Թիֆլիզից՝ Տ. Դիւա աւագ քահ. Աղանեանը, Սիմֆերոպոլից՝ Ղազարոս քահ. Թովսէփեանը և շատ քահանայք Ս. Էջմիածնի և Երեանի դուռաներից:

Սոյն հանդիսին հրաւիրուած էր Երեանի պ. Նահանգապետը և Թիֆլիզի Դատաստանական պալատի աւագ պրօկուրորը, որ այդ միջոցին պաշտօնական գործով Երեան էր եկած:

Այդ հանդիսին հրաւիրուած էր նաև Ս. Միւռոնի նոր կաթման նուիրող Դասպար Աղա Կարապետօղլեանը, որ հիւանդութեան պատճառով չկարողանալով զալ Ս. Էջմիածին, իւր կողմից ուղարկել էր իւր ազգական պ. Սարգիս Խրջեանին:

Սոյնպէս հրաւիրուած էր յայտնի բարեգործ պ. Աւետիս Ղուկասեանը, որ մի քանի օր մնալով Ս. Էջմիածնում և շրջակայ սրբափայլերը այցելելուց յետոյ վերադարձաւ Տիֆլիս:

Վեհ. Հայրապետի հրամանով Եուզոյ հոգևոր Դպրանոցի ժամանակաւոր պաշտօնակատար տեսչի կարգուեցաւ Տ. Տիրայր վարդապետը, իսկ Երեանի դպրանոցի տեսուչ հաստատուեցաւ պ. Նիկողայոս Բարամեանը: